ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սաուդյան Արաբիայի Թագավորություն (Ռիյադ) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**
   Նարեկ Մկրտչյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Սաուդյան Արաբիայի Թագավորություն (Ռիյադ), 2025 թվականի հունվարի 28-ից 30-ը

4. **Հրավիրող կողմը.**
   Սաուդյան Արաբիայի Թագավորության մարդկային ռեսուրսների և սոցիալական զարգացման նախարար Ահմադ բին Սուլեյման Ալ-Ռաջի

5. **Գործուղման նպատակը.**
   Մասնակցություն աշխատաշուկայի երկրորդ գլոբալ համաժողովին

6. **Քննարկված թեմաները.**
   Համաժողովի ընթացքում քննարկումները հիմնականում ծավալվում էին այսօրվա աշխատաշուկայի հրատապ խնդիրների, զբաղվածության վրա կլիմայի փոփոխության ազդեցության, աշխատաշուկայի մարտահրավերների, ժողովրդագրության փոփոխության, զբաղվածության և գործազրկության, ինչպես նաև համաշխարհային աշխատաշուկայի վրա արհեստական բանականության ազդեցության շուրջ:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

- Աշխատաշուկայի երկրորդ գլոբալ համաժողովին մասնակցության շրջանակներում մասնակցել եմ «Նորարարական լուծումներ՝ տարբեր երկրների աշխատաշուկաներում երիտասարդների զբաղվածությունն ամրապնդելու նպատակով» թեմայով նախարարական կլոր սեղանին. քննարկմանը մասնակցում էին աշխատանքի ոլորտը համակարգող 40 նախարար:
  Իմ խոսքում անդրադարձել եմ ՀՀ զբաղվածության ոլորտում սահմանված առաջնահերթություններին և այս ուղղությամբ իրականացվող աշխատանքներին: Այս համատեքստում ընդգծել եմ ՀՀ զբաղվածության 2025-2031 թթ. ռազմավարության մշակման կարևորությունը: Նշել եմ նաև, որ փաստաթղթի մշակմանը զուգահեռ, իրականացվում են մասնագիտական ուսուցման,

աշխատանքային փորձի ձեռքբերման և աշխատանքի տեղավորման աջակցության ծրագրեր, որոնք ուղղված են նպաստելու «կրթություն-աշխատաշուկա» արդյունավետ փոխանակմանը, որակյալ աշխատուժի ձևավորմանը և աշխատաշուկայում մրցունակության բարձրացմանը: Վերջիններս նաև միտված են աջակցելու առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործող անձանց՝ օգնելով նրանց ծանոթանալ աշխատաշուկայի միտումներին և հեշտացնելով աշխատանքի ձեռքբերման գործընթացը:
Իրականացվող բարեփոխումների հիմքում ընդգծել եմ նաև սոցիալական արդարության գաղափարի կարևորությունը և նշել, որ վերջին տարիներին Հայաստանը միացել է Սոցիալական արդարության համաշխարհային կոալիցիային, և շարունակում է ակտիվ ու արդյունավետ համագործակցել սահմանված նպատակների իրականացման ուղղությամբ:
Քննարկման ընթացքում ընդգծել եմ նաև աշխատանքային հարաբերությունների ճկուն մեխանիզմների ներդնման և «աշխատանք-կյանք» հավասարակշռության ապահովման կարևորությունը՝ մանրամասնելով հեռավար աշխատանքի կարգավորումների, աշխատանքային ժամերի կրճատման և նախատեսվող այլ աշխատանքների մասին:

- Մասնակցել եմ «Կառավարությունների դերը՝ աշխատաշուկայի կարճաժամկետ և երկարաժամկետ մարտահրավերների հավասարակշռման գործում երկարաժամկետ հեռանկարով» թեմայով նախարարական պանելային քննարկմանը, որի ընթացքում քննարկվեցին աշխատաշուկայում առկա մարտահրավերների, երիտասարդների զբաղվածության ապահովման, աշխատուժի ավելցուկի և դրա պակասի կառավարման վերաբերյալ մի շարք հարցեր:
Իմ խոսքում անդրադարձել եմ ՀՀ աշխատանքի և զբաղվածության ոլորտում առկա մարտահրավերներին ու դրանց հաղթահարման ուղղությամբ նախատեսվող միջոցառումներին: Այս համատեքստում ընդգծել եմ ՀՀ զբաղվածության 2025-2031 թթ. և ՀՀ ժողովրդագրության 2024-2040 թթ. ռազմավարությունների մշակման կարևորությունը: Նշել եմ, որ ոլորտային այս կարևոր փաստաթղթերը համահունչ են ՀՀ կառավարության տեսլականին, այն է՝ խթանել տնտեսական աճը, նպաստել սոցիալական ներառմանն ու աղքատության մակարդակի նվազեցմանը և այլն:
Աշխատանքի և զբաղվածության ոլորտում առկա մարտահրավերների հաղթահարման գործում շեշտել եմ նաև ՀՀ ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2024-2040 թթ. ռազմավարության դերը: Այս համատեքստում ներկայացրել եմ ակտիվ, առողջ և արժանապատիվ ծերության պայմանների ապահովմանն ուղղված միջոցառումների շրջանակը, որն ուղղված է պետության սոցիալ-տնտեսական կյանքում ավագ սերնդի ներկայացուցիչների ներգրավվածության ապահովմանն ու նրանց ներուժի լիարժեք օգտագործմանը:

Աշխատաշուկայի երկրորդ գլոբալ համաժողովին մասնակցության շրջանակում հանդիպումներ եմ ունեցել.

- The Hevolution հիմնադրամի գործադիր տնօրեն դոկտոր Մեհմուդ Խանի հետ, որի ընթացքում քննարկել ենք ժողովրդագրության հետ կապված հարցերը, ինչպես նաև ԵՊՀ նորաստեղծ Ժողովրդագրական հետազոտությունների կենտրոնի կարողությունների զարգացման և հետազոտական ծրագրերին աջակցման հնարավորությունները:
  The Hevolution հիմնադրամի տարեկան բյուջեն հասնում է մինչև 1 միլիարդ դոլար և նպատակ ունի խթանել առողջ ծերացման գիտությունը՝ ֆինանսավորելով առողջ ծերացման հետազոտություններն ու նորարարական նախագծերը՝ նպաստելով առողջ կյանքի տարիների ավելացմանը:

- Տնտեսագիտության բնագավառում 2024 թվականի Նոբելյան մրցանակակիր Ջեյմս Ռոբինսոնի հետ:Վերջինս Նոբելյան մրցանակը կիսում է աշխարհահռչակ հայազգի գիտնական Դարոն Աճեմօղլուի և հետազոտող Սայմոն Ջոնսոնի հետ. Աճեմօղլուն ու Ռոբինսոնը «Ինչո՞ւ են ձախողվում պետությունները» (Why nations fail) համաշխարհային ճանաչում ունեցող գրքի հեղինակներն են:
  Հանդիպման ընթացքում Ջեյմս Ռոբինսոնն անդրադարձավ մարդկային կապիտալի զարգացման, բարձր արտադրողականությամբ աշխատատեղերի աճի և աշխատուժի առաջարկի վերաբերյալ մի շարք հարցերի:
  Հանդիպման ավարտին Ջեյմս Ռոբինսոնը հետաքրքրություն արտահայտեց Հայաստան այցելելու վերաբերյալ:

- Զրույց եմ ունեցել Աշխատանքի միջազգային կազմակերպության գլխավոր տնօրեն Գիլբերտ Հունգբոյի հետ:
  Քննարկել ենք աշխատանքի և զբաղվածության ոլորտում համագործակցության ընթացքին ու նախատեսվող ծրագրերին առնչվող մի շարք հարցեր:

- Արաբական ծոցի զարգացման հիմնադրամի (AGFUND) գործադիր տնօրեն, դոկտոր Նասեր Ալ Քահթանիի հետ հանդիպման ընթացքում քննարկել ենք հիմնադրամի մասնակցությամբ Հայաստանում սոցիալական զարգացմանն ուղղված տնտեսական, ֆինանսական, կրթական, գյուղատնտեսական և տեխնոլոգիական նախաձեռնությունների իրականացման ուղղությամբ հնարավոր համագործակցության հնարավորությունները:

- Արաբական Ծոցի զարգացման հիմնադրամի տնօրենների խորհրդի նախագահ, արքայազն Աբդուլ Ազիզ բին Թալալի հետ հանդիպման ընթացքում քննարկել ենք երկկողմ համագործակցության ամրապնդմանն առնչվող ռազմավարական առաջնահերթությունները: Հանդիպման ընթացքում անդրադարձ արվեց նաև 2024 թ. նոյեմբերին Հայաստանում կայացած «Ճանապարհ դեպի սոցիալական արդարություն. արժանապատիվ աշխատանք» համաժողովին, որի շրջանակում արքայազն Աբդուլ Ազիզն այցելել էր Հայաստան և հանդիպել երկրի ղեկավարության հետ՝ փոխադարձ համագործակցության ոլորտները բացահայտելու նպատակով:
  Արքայազն Աբդուլազիզը հայտնեց, որ իր հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը հաստատել է Հայաստանում ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջոցով Կանանց տնտեսական զորեղացման ծրագրերի ֆինանսական աջակցության որոշումը: Նախաձեռնության նպատակն է խթանել կանանց տնտեսական մասնակցությունը և հզորացումը՝ առաջ մղելու գենդերային հավասարությունը և ներառական զարգացումը: Նախաձեռնության շրջանակում գյուղաբնակ կանանց, բռնի տեղահանվածների, հաշմանդամություն ունեցող անձանց և այլ թիրախային խմբերի համար իրականացվելու են կրթական, կարողությունների զարգացման, դեպի աշխատաշուկա ուղղորդման և այլ ծրագրեր:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

- The Hevolution հիմնադրամի գործադիր տնօրեն դոկտոր Մեհմուդ Խանի հետ հանդիպման ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել համագործակցել Հայաստանի ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2024-2040 թթ. ռազմավարության իրականացման ուղղությամբ՝ հատկապես կենտրոնանալով ակտիվ ծերության խթանման և վաղաժամ մահացության կանխարգելման վրա:

- Աշխատանքի միջազգային կազմակերպության գլխավոր տնօրեն Գիլբերտ Հունգբոյի հետ հանդիպման ավարտին պայմանավորվածություն է ձեռք բերվել առաջիկայում անդրադառնալ Սոցիալական արդարության երրորդ համաժողովի կազմակերպմանն առնչվող հարցերին:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

2/4/2025

X

ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ

Ստորագրությունը, Signed by: MKRTCHYAN NAREK 3014890804 **ամսաթիվը:**

Հավելված N 2
ՀՀ վարչապետի
N 326-Ն որոշման

«Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը *ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն*

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը *ՀՀ վարչապետի 14.01.2025 թ. N 29-Ա որոշում*

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյան

4. Գործուղման վայրը *Սաուդյան Արաբիայի Թագավորություն (Ռիյադ)*

5. Գործուղման ժամկետները *28.01.2025թ.-30.01.2025թ.*

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը՝

(*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*)

ճանապարհածախս, գիշերավարձ

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը

(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

- ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը
- բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		*Անուն, ազգանուն*	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	-	-
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	-	-
Գիշերա-վարձի հաշվարկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	-	-
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	-	-
	Օրերի քանակը	-	-
	Ընդամենը (դրամ)	-	-
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	-	-
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	-	-
	Օրերի քանակը	-	-
	Ընդամենը (դրամ)		
Այլ ծախսեր	Հակահամաճարակային Նմուշառումների վճար	-	-
	Մուտքի արտոնագրի վճար	-	-
	Այլ ծախսեր (նկարագրել)	-	-
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)			

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը, ամսաթիվը

2/4/2025

X

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԳԼԽԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԻՍՏ **Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆ**